2. շինարարությունն սկսվել է Արամուս համայնքի ղեկավարի կողմից

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

Տրված «05» ապրիլի 2021 թ. N 08 շինարարության թույլտվության համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է «ՀՈՎԱՐՍ ԵԻՆ» ՍՊԸ-ի կողմից

(զլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ միահարկ հասարակական սպասարկման օբյեկտ և տարածքի ասֆալտապատում

5. հատուկ պայմանները ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը «20» փետրվարի 2024 թ.

2) ընդունող հանձնաժողովի ակտը «19» փետրվարի 2024թ.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 4 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

«05» մարտի 2024թ.

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1091

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ
56 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Մարիտա Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 21-ի N Ք-1261)։

1. Արշավիր Սերոյոժյանի Արզումանյանին, Մարիտա Օնիկի Հարությունյանին, Վահե Արշավիրի Արզումանյանին և Լիլիթ Արշավիրի Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի նոյեմբերի 10-ի N 1354529 վկայական) Արովյան համայնքի Արովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի թիվ 56 հասցեում գտնվող 510.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 222.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023VNGGQR)։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսույն) օրվա ընթացքում Արովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 516 005 (հինգ հարյուր տասնվեց հազար հինգ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արովյան

Հրահանգի կոդ/անվանում/տեսակ	1. Բաժնի արև		Չափը (լիտր) (b)
	X	Y	
1	4462210.85	8469437.77	10.90
2	4462220.35	8469432.42	12.13
3	4462226.09	8469443.11	11.00
4	4462216.39	8469448.30	3.25
5	4462214.88	8469445.43	1.24
6	4462213.78	8469446.00	0.46
7	4462213.56	8469445.60	1.56
8	4462212.18	8469446.32	5.14
9	4462209.79	8469441.77	2.80
10	4462212.27	8469440.47	3.05
1	4462210.85	8469437.77	



Բրանձավորում ունեցող անձ		Տիգրան Լևոնյան
Բրանձավորման վկայականի համարը		247
Ստորագրություն		<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը		«ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ» ԱԾ
ՀՎՀՀ		83336834
Ստորագրություն		<i>[Signature]</i>
ամիս	չափազորում	24.05.2021թ.
ամսվա	հատման	07.06.2021թ.

ԾԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մարզ Կոտայք, համայնք Արոսյան Արովան ք. 8-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս 56

Մարզ, համայնք, քաղաք

1	Բնակելի	Քմիսի	2	3	4	5	6	7	8	9	10	Տանիքի նյութ (քմ)				Ավարտվածության աստիճան (քմ)				Ծիւղերի կամ կառուցվածքի տեսակը				Միջնակարգի Ծածկի նյութ				Արտաքին հարգարարն րստ կողմերի							
												կղզի	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին	փոքր	մեծ	միջին
1	Բնակելի	Քմիսի	1	2	1	2	53.30		2.90	154.57	2007	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
1	Բնակելի	Քմիսի	1	2	1	2	62.10	2.90	180.09	2007								V												V					
1	Բնակելի	Քմիսի	2	2	2	2	111.90	3.15	352.49	2007								V												V					
1	Բնակելի	Քմիսի	2	2	2	2	14.40			2007																									

Միջ թվում	
Քմիսի	36
Բնակելի	37
Ծիւղերի	53.3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՅԻՆ	241.7
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՅԻՆ	188.4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1092

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 30-Ա որոշման, հիմք ընդունելով Արովյան համայնքում սահմանված տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 01-ի ուսումնասիրության ակտը և Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի մարտի 01-ի N Բ-1549).

1. 2024 թվականի համար Արովյան համայնքի «Արովյան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվող՝ 2019 թվականի փետրվարի 19-ին ծնված՝ Անգելինա Կարենի Մինասյանի համար, Արովյան համայնքում սահմանված տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել վճարի 50 տոկոսի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից և տարածվում է 2024 թվականի փետրվարի 01-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1093

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 07-002-0076-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՔԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Արուսյան համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 16-ի N 06-Ա որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և հիմք ընդունելով Բաքիկ Ալեքսանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 08-ի N Ք-864).

1. Բաքիկ Ալեքսանյանին պատկանող (հիմք՝ 1994 թվականի հունիսի 1-ի բնակելի տան և հողամասի առուձախի պայմանագիր՝ գրանցված Կոտայքի նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում N 2-1472) Արուսյան համայնքի Արուսյան քաղաքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 07-002-0076-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում, կադաստրային քարտեզագրման արդյունքում 570.0 քառակուսի մետր մակերեսով հողամասից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 60.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Բաքիկ Ալեքսանյանի սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բաքիկ Ալեքսանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արուսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1094

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արմավյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով Ոսկան Վարդանյանի լիազորած անձ Գասպար Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 23-ի N Բ-1311).

1. Ոսկան Վարդանյանին տալ կիսակառուց շինությունը բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Ոսկան Վարդանյանը պարտավոր է Արմավյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Արմավյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արմավյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 120 05 մարտ 2024թ

Տրված է
կառուցապատող

ՈՍԿԱՆ ՎԱՐՊԱՆՅԱՆԻՆ, ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՖՈՒԶԻԿԻ 1-ԻՆ ՆՐԲ., 6 Ե., 22
ԲՆ.

[Իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը]

ՀՀ, Կոտայքի մարզ, Արովյան համայնք, գ. Վերին Պարզնի, Նորավան թաղամաս, 2-
րդ փողոց, 13/3

հասցեում

[Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը]

Կիսակառույց շինությունը բնակելի փան, միջինից բարձր ռիսկայնության աստիճան՝
III կարգերիա

օբյեկտի

[Օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները]

Վերակառուցման

շինարարական աշխատանքների կատարման, այդ
թվում՝

Ռոտ կառուցման, վերակառուցման, վերանայնագրման, ուղղորդման և
այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի
վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման
համար:

(նշվում են ոչ հիմնական
կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային
փաստաթղթերը՝
1) նշակվել են

«ԼԻՆԵԱ ԱՐԲԻԹԵՔՍ» ՍՊԸ

[Նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի
անվանումը]

արտոնագիր ՃԲԴ-Ա-052, ԿԱԴ-Ա1-015

կողմից,

[ըցենզիայի համարը]

2) ստացել է (են) 14/12/2023 թ. N 919/23 փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

ՊԱՐԶ

(նշել փորձաքննության տեսակը)

«ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ԲՊԼ 17418

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորագիրը՝

թ. N

[Նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի
երաշխավորության պայմանագրի համարը]

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու
մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

ԱՐՈՎՅԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ,

հետ:

(նշել մարմինների անվանումները և
համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական

աշխատանքներն իրականացնել

05 մարտ 2024 - 05 մարտ 2025

ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տնորոշումները)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

- ավարտական ակտի տրամադրումից 1 ամսվա ընթացքում,
- ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 19 էջից, կարված և դրոշմակնքված է **ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՎԱՐԻ** կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_____ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լրցենդիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

_____ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

_____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք փաստերի փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով փաստեր կրող սուբյեկտների հետ.

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) _____ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

_____ (նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապարի և տեղեկատվական վահանակի առկայությունը**

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿՎԱՎԱՐ**

**ԷՂՈՒԱՐԴ
ԲԱԲԱՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1095

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՇԵՆՔԻ ԵՏՆԱՄԱՍՈՒՄ
ԳՏԿՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒԹՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով Սարգիս Տեղյանի դիմումը (մուտք 2024 թվականի փետրվարի 05-ի N Զ-706)։

1. Արովյան համայնքի Արովյան քաղաքի Սարայանցի փողոցի թիվ 8 շենքի ետնամասում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 28.2 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնական կառուցված 28.2 քառակուսի մետր արտաքին և 22.5 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը համարել Արովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023DVBMSB)։

2. Ընդունել ի գիտություն, որ՝

- 1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը։
- 2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում։
- 3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք։

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է)։

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, քաղաք Արովյան, Սարայանցի փողոց, թիվ 8/316։

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը։

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնական կառույցն իրականացրած Սարգիս Տեղյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. մարտի 05
ք. Արովյան

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՍԱԿԱԳԻԾ


Ձև 3

Մարզ Կոտայք, համայնք Արուսյան ք.Արուսյան Մարալանց 8 շենքի հասցեին հարակից

Մարզ, համայնք, հասցե

Պատվիրատու

Սարգիս Տեղյան



1.1-ին հարկ

h=2.4

D=0.2-0.3

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ		Սուրեն Գաբրիել
Որակավորման վկայականի համարը		0307
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Լիլիթ Զոհրաբեյանի շաղկապ» ՊԸ
ԳԿԴԴ		72039832
Ստորագրություն		
ամիս	չափագրության	18.12.2023
ամսաթիվ	հաստատագրի կազմման	22.12.2023



Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N 0309

ՍՈՒՐԵՆ ՍԵՐԳԵՅԻ ՇԱԽՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության
գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի
4 դեկտեմբերի 2013թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1
տրվել է

**ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ
(ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ



Ե. ԶԱՆԱՐՅԱՆ



<<05>> դեկտեմբերի 2013թ.

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդումն կամ տեղափոխումն (ապամեռնաժամանակ) պայմանները և աշխատանքների ենթակառուցվածքը

Առկա չէ

11. Մտորգետեսչ, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն նորմերի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) Գրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Համաձայն նորմերի

(Պահանջն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.2. (*) Էլեկտրամատակարարում

Համաձայն նորմերի

(Պահանջն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.3. (*) գազամատակարարում

Համաձայն նորմերի

(Պահանջն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմաններին)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրոջը

Համաձայն նորմերի

(Պահանջն 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ կետով սահմանված կրկնապատիկ ավելանելով)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

Առկա չեն համայնքային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրանեռացում:

(տեխնիկական նախագիծ, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել

(տեխնիկական պայմանագրերի կազմակերպում, կանաչապատում, մարտարկայնական վաշտ մեկ, ցանկապատում, գրիպեղ և այլն)

15. Երկարաժամանակ ցյուրեր

Երկաթբետոնե տարրեր, բարե շար, ապակի, մետաղական տարրեր:

(շինարարական կուրսերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների, լուծույթների, արտաչիլի որևէ լին, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Ըստ նախագծի

(տարածքի ինժեներական մոդելի միջոցով օբյեկտների պաշտպանության միջոցառումներ)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(նախնշման ընդհանուր պահանջները սահմանված միջոցառումներով)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարք խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Երջակա միջավայրի պահպանում

Ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(շրջակա միջավայրի վնասվածքը նվազեցնող բոլորանոց միջոցառումներ)

20. Երկարաժամանակ կազմակերպում

Ըստ նորմերի

(տարածքի ինժեներական մոդելի միջոցով օբյեկտների պաշտպանության միջոցառումներ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

մեկ տարի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

(Ընդունվել են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Ց Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը մերկայացվող պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի քանի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված փորձաքննության ակտերը կամ նախագծային կառուցվածքները կամ կառուցվող համապատասխան իրավական ակտեր)

23. Միջանկյալ համաձայնեցում

չի պահանջվում

(իրավասու մարմին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը նախատեսված դեպքերում՝ նախագրի մարմինների կամ Էքզերտային նախագծի նախնական համաձայնեցում, կրկն է նաև առաջադրանքի փոփոխման ենթակառուցվածքները՝ 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 67-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Նորմերի համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

- Միջին նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն մեք բերել ավագ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ

(ընդունվել են ավագ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պայմանները՝ հուշարկանների ու բնության պահպանության և այլ շտաբով սահմանված մարմինների կետ, ինչպես նաև 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործող, թ))

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

չի պահանջվում

27. Այլ պայմաններ

- Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առնվող քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:
- Երկուսուրեք նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն, քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:
- Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Handwritten signature in blue ink

ԷՂՈՒԱՐԴ ԲԱԸԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1097

**ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԱՍՅԱՆԻՆ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Վ. ՏԵՐՅԱՆ
ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, ԱրոՎյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով Էդուարդ Բաղասյանի լիազորած անձ Սլավիկ Բաղասյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 29-ի N Բ-1496)։

1. Էդուարդ Բաղասյանին տալ բնակելի տան և պարսպի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է)։
2. Էդուարդ Բաղասյանը պարտավոր է ԱրոՎյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 90 000 (իննսուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար։
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ԱրոՎյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. ԱրոՎյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 121 05 մարտ 2024թ

Տրված է կառուցապատող

ԷՂՈՒԱՐԴ ԲԱՂԱՅԱՆՆԻՆ, ՀՀ, ԵՐԵՎԱՆ, Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ Փ., 22, 18

(իրավարանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

ՀՀ, Կոտայքի մարզ, Արթուրյան համայնք, գ. Առինջ, Վ. Տերյան թաղամաս, 4-րդ փողոց, 39

հասցեում

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

բնակելի տան և պարսպի, միջինից բարձր ռիսկայնության աստիճան՝ III կարգերի

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղղումների և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային

փաստաթղթերը՝

1) նշակվել են

«ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵԲԹՅՈՒՆ» ՍՊԸ

(նախագծային փաստաթղթերի վրա, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը)

արտոնագիր ՃՔԴ-Ա-0199, ԿԵԴ-Ա2-022

կողմից,

(լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) 27/02/2024 թ. N 63/24 փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

ՊԱՐԶ

(նշել փորձաքննության տեսակը)

«Ա.Ռ.Մ. ՇԻՆ» ՍՊԸ ԲՊԼ 17325

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու

կապալառուի երաշխավորագիրը՝

թ. N

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու

մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

ԱՐՈՎՅԱՆԻՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ,

հետ:

(նշել մարմինների անվանումները և ժամանակեցման ժամկետները)

2. Շինարարական

աշխատանքներն իրականացնել

05 մարտ 2024 - 05 մարտ 2026

ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տեղադրումները)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

ավարտական ակտի տրամադրումից 1 ամսվա ընթացքում,

ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 19 էջից, կարված և դրոշմակնքված է **ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ** կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_____ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, փցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) _____

քանդման՝

(նշվում են անբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ

պայմաններ

շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապարի և փրեղեկարվական վահանակի առկայությունը

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԷՂՈՒՐԴ
ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1098

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի կարգի 10-րդ կետի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2024 թվականի փետրվարի 27-ի N 01/03.1/01517-2024 գրությունը և Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 13-ի N Բ-997).

1. Փոփոխել Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղում գտնվող 07-011-0241-0010 կադաստրային ծածկագրերով 1390.6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը որպես բնակելի կառուցապատման հողամաս և տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, գյուղ Առինջ, Գ թաղամաս, 4-րդ փողոց, 2/3 հողամաս:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ


2024թ. մարտի 05
ք. Արովյան

ՀՈՒԱՍԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՉԱ 1
 Հաստատված է
 2024 թ. 03.03
 Հ.Ս.
 Երուսաղի Բարսեղյան
 ամուսնու արձանագրության հարմարում

Կոտայքի մարզ, Արովյան համայնք, Սոհինգ գյուղ
 (մարզ, համայնք, հասցե)

Քաղաքացիական հիմք



Սակերես հա	0.13906 հա
Ծածկագիր	07-011-0241-0010
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառնական նշանակություն	բնակելի կառուցապատման
<i>Լրացրելու նշումներ:</i>	

Երջարարմային կետեր	Հողամասի կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8465087.666	4456124.584	15.98
2	8465078.994	4456138.005	53.63
3	8465049.892	4456183.046	58.28
4	8465107.886	4456177.337	14.51
5	8465106.282	4456162.914	14.31
6	8465092.024	4456161.726	1.11
7	8465090.923	4456161.606	23.03
8	8465087.948	4456138.771	14.19
1	8465087.666	4456124.584	

Ռազմավորում ունեցող անձ	Մասշտաբ 1:1000
Ռազմավորման վկայականի համարը	Վայրերի փայտադան
Ստորագրություն	054
Իրավաբանական անձի անվանումը	ԱԶ Վայրերի փայտադան
ՀԱԳԳ	75326426
Ստորագրություն	ՀԱՄԱՐ 13906
ամիս	25.01.2024 թ.
անսարքի կազմման	27.02.2024 թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1099

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԶՐՀՈՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 26-ի N Ք-1396).

1. Արվյան համայնքին տալ Արվյան համայնքի Կամարիս գյուղում ջրհորի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1100

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 100 ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՌԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 290-292-րդ հոդվածների, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև հաշվի առնելով «ԿԱԿՏՈՒՄ ԲԱԼԱՀՈՎՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գևորգ Հարությունյանի լիազորված անձ Վահե Սիմոնյանի կողմից Արովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 10-ի N 100 որոշման դեմ ներկայացված վարչական բողոքը (մուտք՝ 20.02.2024թ. N Բ-1186), ինչպես նաև վարչական բողոքի քննարկման վերաբերյալ 2024 թվականի մարտի 05-ի արձանագրությունը՝

- Արովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 10-ի «ԿԱԿՏՈՒՄ ԲԱԼԱՀՈՎՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գևորգ Հարությունյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին» N 100 որոշումը թողնել առանց քննարկման վարչական բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացնելու հիմքով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱՐԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արովյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 1101

**«ԼԵԿՈՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ ՀԱԿՈՔԻ» ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը (նկարագրական մաս).

Արուսյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները 2024 թվականի փետրվարի 14-ի N Ե-1089 հանձնարարագրի հիման վրա 2024 թվականի փետրվարի 14-ին «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից շահագործվող Արուսյան համայնքի Արուսյան քաղաքի Սահմանադրության հրապարակի թիվ 12 հասցեում գտնվող բենզալցակայանում (կրպակ) իրականացրել են հսկողություն, որի արդյունքում հայտնաբերվել է օրենքով սահմանված պահանջների խախտում՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք է կրկին իրականացվել, որի վերաբերյալ կազմվել է առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ N 13 արձանագրությունը:

20.02.2024թ. զեկուցագրի հիման վրա /մուտք՝ 20.02.2024թ. N Ք-1198/ 21.02.2024թ. N Ե-1296 ծանուցագրով «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ, որի լուծումները նշանակվել է 2024 թվականի մարտի 05-ին՝ ժամը 11:00-ին:

Վարչական վարույթի մասնակից «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատերը վարույթի լաման ժամանակ հայտնեց, որ ինքը արձանագրման պահին Արուսյան քաղաքի Սահմանադրության 12 հասցեում չի գտնվել, բացի այդ աշխատակիցները եղանակ չեն ունենում վաճառել, քանի որ այդպիսի հրահանգ իրենց տրված չի եղել:

2. Ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ արտադրության համար նախատեսված հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի՝ սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Համաձայն Արուսյան համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Լևոն



Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին» N 3536 որոշման՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելու համար վերջինիս նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք 700 000 (յոթ հարյուր հազար) դրամի չափով:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է հակահրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին, իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է՝ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի...:

Սույն գործով հաստատված փաստ է համարվում «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելը, որպիսի արարքն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված իրավախախտում:

Սույն գործով առկա է վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, այն է՝ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի, ինչպես նաև հակահրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին:

Ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 34-րդ հոդվածով, 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 219.1-ին, 275-283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 302-րդ և 305-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածով, ինչպես նաև հաշվի առնելով Արմվյան համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N 3536 որոշումը և հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 14-ի առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ N 13 արձանագրությունը և Արմվյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 05-ի արձանագրությունը

ՈՐՈՇԵՑԻ

1. «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելու համար նշանակել վարչական տուգանք 800 000 (ութ հարյուր հազար) դրամի չափով:

2. «Լևոն Ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է սույն որոշումն իրեն հանձնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Արմվյանի համայնքապետարանի 900105201272 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Արմվյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել կամ վարչական կարգով Արմվյան համայնքի ղեկավարին՝ այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:



4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լևոն ժամհարյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 05
ք. Արուսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 1102

**«ԵՂԻՍԱՔԵԹ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՌԱՖԻԿԻ» ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Եղիսաբեթ Բարսեղյան Ռաֆիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի մարտի 05-ի N Ք-1614)։

1. «Եղիսաբեթ Բարսեղյան Ռաֆիկի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արովյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 24 կցվում է)։
2. «Եղիսաբեթ Բարսեղյան Ռաֆիկի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Եղիսաբեթ Բարսեղյան Ռաֆիկի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱՐԱՅԱՆ



2024թ. մարտի 06
ք. Արովյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 24

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԷ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

Տրված՝ **06 մարտի 2024թ.**

Թույլատրված գործունեության անվանումը՝
Թանկարժեք մեդալներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«Եղիսաբեթ Բարսեղյան Ռաֆիկի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ ք. Երևան Նուբարաշեն փողոց 18 փուն 4, ՀՎՀՀ՝ 30950997:

Գործունեության իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2, առևտրի սրահ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2024թ.-ից մինչև 01 հուլիսի 2024թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 1103

«ՀԵՐԻՔՆԱԳ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԻՇԱՅԻ» ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արմվյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Հերիքնագ Նիկողոսյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի մարտի 05-ի N Ք-1618)։

1. «Հերիքնագ Նիկողոսյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արմվյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 25 կցվում է)։
2. «Հերիքնագ Նիկողոսյան Միշայի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հերիքնագ Նիկողոսյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 06

ք. Արմվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԴՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 25

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԷՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 06 մարտի 2024թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝
Թանկարժեք մեքաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

«Հերիքնազ Նիկողոսյան Միշայի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ ք. Երևան Սարյան փողոց 2. 33 բն. 22, ՀՎՀՀ՝ 40028133:

Գործունեության իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2, առևտրի սրահ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2024թ.-ից մինչև 01 հուլիսի 2024թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ



ԷՂՈՒԱՐԴ ԲԱՐԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 1104

**«ԳՈՒՐԳԵՆ ԴԱՆԵԼՅԱՆ ՎԱԼԵՐՅԱՆԻ» ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌՔ
ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արմվյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Գուրգեն Դանելյան Վալերյանի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի մարտի 05-ի N Ք-1617)։

1. «Գուրգեն Դանելյան Վալերյանի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի ընթացքում Արմվյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 26 կցվում է)։
2. «Գուրգեն Դանելյան Վալերյանի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գուրգեն Դանելյան Վալերյանի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 06
ք. Արմվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՔՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 26

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԷՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 06 մարտի 2024թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեքաղեններից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

«Գուրգեն Դանեցյան Վալերյանի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճրն Չարենցի փողոց 2, 21 բն. 26, ՀՎՀՀ՝ 30958801:

Գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ Արուսյան համայնք Առինջ գյուղ Գ թաղամաս 9-րդ փողոց թիվ 2, առևտրի սրահ:

Թույլտվության գործողության ժամկետը՝ 01 հունվարի 2024թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2024թ.-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԹՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 1105

**«ԱՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՐՎԱՆՂԻ» ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌՔ
ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արթվյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «Արման Հայրապետյան Երվանդի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի մարտի 05-ի N Ք-1616)։

1. «Արման Հայրապետյան Երվանդի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2024 թվականի ընթացքում Արթվյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 9-րդ փողոցի թիվ 2 առևտրի սրահի վաճառատեղում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 27 կցվում է)։
2. «Արման Հայրապետյան Երվանդի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արթվյանի համայնքապետարանի 900105002985 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արման Հայրապետյան Երվանդի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 06
ք. Արթվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 27

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԷՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ
ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝ 06 մարտի 2024թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝

Թանկարժեք մեդալներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

